

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՎԱՐԴԱՆԻ**

**Հայ բնակչության գաղթը և հայկական իշխանությունների ստեղծումը  
Լեոնային Կիլիկիայի հարակից երկրներում (IX-XI դդ.)**

**Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ-2019**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

**Գիտական ղեկավար՝** պատմական գիտությունների դոկտոր Եղիազարյան Ա.Ա.

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** պատմական գիտությունների դոկտոր Տեր-Ղևոնդյան Վ.Ա.

պատմական գիտությունների թեկնածու Գևորգյան Զ.Հ.

**Առաջատար կազմակերպություն՝** ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թ. հոկտեմբերի 22-ին, ժամը 14<sup>00</sup>-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թ. սեպտեմբերի 10-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Մուրադյան Հ.Ղ.

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի գիտական նշանակույթ** **և արդիականությունը:** IX-XI դդ. հայ բնակչության գաղթի հետևանքով Լեռնային Կիլիկիայի հարակից երկրամասերում հայկական իշխանությունների ձևավորումը կարևոր իրադարձություն է հայոց և Մերձավոր Արևելքի ժողովուրդների պատմության մեջ: Հյուսիսային Ասորիքում, Կիլիկիայում և վերջինիս հարակից երկրամասերում XI դ. վերջից հայկական իշխանությունների հիմնադրմամբ տարածաշրջանում հայտնվեց նոր՝ հայկական գործոն՝ իրենով պայմանավորելով տարածաշրջանային բազմաթիվ գործընթացներ առաջիկա 300 տարիների ընթացքում:

Հայրենիքից հայության զանգվածային գաղթերի և նոր միջավայրում հաստատվելու գործընթացն սկսվեց Միջնադարում: Այն հատկապես մեծ ծավալ ստացավ արաբական արշավանքների և տիրապետության ժամանակահատվածում: Արաբները Հայաստանի գրավյալ շրջաններում իրականացրին արաբական ցեղերի բնակեցման քաղաքականություն, իսկ հայության զգալի զանգվածները, այդ թվում՝ զինված ուժը կամ բռնի հեռացվում էր երկրից կամ, այլընտրանք չունենալով, կամովին բռնում էր գաղթի ճանապարհը:

Հայության հանդեպ գաղթեցման քաղաքականություն իրականացրեց նաև Բյուզանդական կայսրությունը, որը մինչև X դ. հայրենիքից հեռանալու և կայսրության տարածքներում հաստատվելու պայմաններ ստեղծեց հայ իշխանների և զինվորականների համար: Իսկ արդեն XI դ. կայսրությունը Հայաստանի նկատմամբ որդեգրեց ծավալապաշտական քաղաքականություն: Հայաստանի տարածքները իրեն կցելու նպատակով Բյուզանդիան առանձին թագավորների ու իշխանների հնարավորություն էր տալիս իրենց ընտանիքներով ու հպատակներով տեղափոխվել կայսրության արևելյան ու հարավարևելյան տարածքներ, իսկ նրանց տիրույթները կայսրությունը ստանում էր փոխանակման կամ բռնակցման ճանապարհով:

Դրությունը վատթարացավ XI դարում՝ սելջուկ-թուրքերի՝ Հայաստան ներխուժումից հետո: Հայության արտագաղթերը զանգվածային բնույթ ստացան հատկապես Մանազկերտի ճակատամարտում (1071 թ) սելջուկ-թուրքերից Բյուզանդիայի կրած խորտակիչ պարտությունից հետո:

Այդ շրջանում հայրենիքից հեռացած և հատկապես Կիլիկիայում ու շրջակա երկրամասերում հաստատված հայության համար առաջին հերթին անվտանգության շարժառիթով առանցքային դարձավ բնակչության նոր միջավայրում հայ իշխանների ու իշխանական տների շուրջ համախմբումը և սեփական իշխանությունների ձևավորումը: Այդ գործընթացը Կիլիկիայում և նրան հարակից միջավայրերում հետագայում հիմք հանդիսացավ Կիլիկիո Հայոց թագավորության ձևավորման համար:

Թեմայի ուսումնասիրության գիտական նշանակությունը կարևոր է, քանի որ թեև խնդրո առարկա հայկական իշխանություններից որոշների մասին առկա է զգալի գրականություն (հայ և օտար հեղինակների ուսումնասիրություններ), հայրենի պատմագիտության մեջ խնդիրը նման ընդգրկմամբ և հիմնահարցերի նման դրվածքով քննության չի առնվել, մինչդեռ կարող էր լույս սփռել հայ միջնադարագիտության մի քանի, հատկապես մերձավորարևելյան զարգացումներում հայության դերի և Կիլիկիո Հայոց թագավորության հիմնադրման հետ կապված էական հիմնահարցերի վրա: Թեմայի ուսումնասիրությունն իր էական ներդրումն ունի նաև հայության միջնադարյան գաղթերի ուսումնասիրության տեսանկյունից:

Թեմայի ուսումնասիրությունը հույժ արդիական է, քանի որ Կիլիկիայում և հարակից երկրամասերում հայության հաստատման, հայկական իշխանությունների ստեղծման, հարդյունս Կիլիկիո Հայոց թագավորության ձևավորման, ինչպես նաև տարածաշրջանի հայության տեղի ու դերի արժևորման հետ առնչվող հիմնահարցերը ներկայումս մեծ հետաքրքրություն են առաջացնում հայ և օտար միջնադարագետների շրջանում: Ավելին, դրանք շահարկվում են մեր հարևան պետությունների պատմաբանների կողմից, որոնք փորձ են կատարում նսեմացնել հայության դերը տարածաշրջանում խնդրո առարկա ժամանակաշրջանում, ինչպես նաև որոշակի հայ իշխանների վերագրել ոչ հայկական ծագում:

Թեմայի ընտրությունը նման դրվածքով և հիմնահարցերի նման ընդգրկմամբ հիմնականում համապատասխանեցված է արդիականության՝ նշված ուղենիշներին:

**Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները:** Ատենախոսության նպատակը IX-XI դդ. հայրենիքից հայության գաղթերի և Լեռնային Կիլիկիայի հարակից երկրամասերում հայկական իշխանությունների ստեղծման գործընթացի ուսումնասիրությունն է:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ ենք համարել.

- ներկայացնել և պարզաբանել IX-XI դդ. հայության գաղթերի պատճառները, ընթացքը և ուղղությունները,
- լուսաբանել գաղթերի հետևանքով Փոքր Հայքում, Կապադովկիայում և Հյուսիսային Ասորիքում հայության համախմբման գործընթացը,
- վեր հանել Լեռնային Կիլիկիայի հարակից երկրամասերում ծնունդ առած հայկական իշխանությունների ձևավորման պատճառները,
- համակողմանի վերլուծել Մեծ Հայքից տեղափոխված հայոց մեծամեծերի տիրույթների ընդգրկումը խնդրո առարկա երկրամասերում,

- լուսաբանել Լեոնային Կիլիկիայի հարակից երկրամասերում ձևավորված հայկական իշխանությունների միջև փոխառնչությունները,
- փաստագրել նոր միջավայրում հաստատված հայոց թագավորների և իշխանների փոխհարաբերությունները արաբների, Բյուզանդական կայսրության, սելջուկ-թուրքերի և խաչակիրների հետ,
- վերլուծել հայկական իշխանությունների անկման ընթացքը և պատճառները:

**Ուսումնասիրության մեթոդաբանությունը:** Սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները համադրելիս և գրականության վերլուծություն կատարելիս առաջնորդվել ենք պատմանկարագրողական (նարրատիվ), վերլուծական-համադրական և պատմահամեմատական մեթոդներով: Պատմանկարագրողական մեթոդի կիրառմամբ կատարվել է պատմական դեպքերի նկարագրություն ժամանակագրական, բովանդակային ու պատճառահետևանքային հաջորդականությամբ: Վերլուծական-համադրական մեթոդի կիրառմամբ իրականացվել է փաստերի վերհանում և հավաքագրում, համակարգում (բաշխում), վերլուծում և ամփոփում: Այս մեթոդի կիրառումը հնարավորություն է տվել ընդգրկուն ձևով ներկայացնել խնդրո առարկա իշխանությունների ստեղծումը, տարածքային աճը և ժողովրդագրական հարցերը: Պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ համեմատել և ներկայացրել ենք հայկական տարբեր իշխանությունների ձևավորման առանձնահատկությունները:

**Արենախոսության գիտական նորոյթը:** Աշխատանքի գիտական նորոյթն ընդհանուր առմամբ կայանում է հայրենի պատմագիտության մեջ մինչ այժմ քննության չառնված հիմնախնդիրների ուսումնասիրության արդյունքների մեջ: Չնայած տարբեր հեղինակների կողմից խնդրին առնչվող մի շարք հիմնահարցերի ուսումնասիրությանը, IX-XI դդ. հայ բնակչության գաղթերը և Լեոնային Կիլիկիայի հարակից երկրամասերի հայկական իշխանությունների ձևավորման գործընթացը ընդհանուր առմամբ որպես մեկ ամբողջություն չի ուսումնասիրվել:

Սույն ատենախոսությանը IX-XI դդ. հայրենիքից հայ բնակչության գաղթի ի հետևանս Լեոնային Կիլիկիայի հարակից երկրամասերում հայկական իշխանությունների ձևավորման ու անկման պատմության ամբողջական ուսումնասիրության փորձ է:

Ի մասնավորի լուսաբանվել կամ բացահայտվել են Լեոնային Կիլիկիայի հարակից երկրամասերի հայկական իշխանությունների սահմանները, ինչպես նաև իշխանությունների ձևավորման պատմությանն առնչվող ժամանակագրական ու բովանդակային բազմաթիվ իրողություններ:

**Ուսումնասիրության կիրառական նշանակությունը:** Ատենախոսությունը և նրա արդյունքները կարող են օգտակար լինել հայոց միջնադարյան շրջանի պատմության հիմնահարցերով զբաղվող հետազոտողների համար: Մյուս կողմից աշխատանքի արդյունքերը կարող են օգտագործվել IX-XI դդ. հայոց պատմության և պատմական աշխարհագրության խնդիրներին նվիրված բուհական դասընթացներում:

**Հեղազոտության փորձաքննությունը:** Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է ներկայացվել ԵՊՀ և Հայոց պատմության Սփյուռքագիտության ամբիոնների կողմից: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի<sup>1</sup> թվով 8 հոդվածներում:

**Հեղազոտության ժամանակագրական և տարածական շրջանակը:** Ուսումնասիրության ժամանակագրական շրջանակն ընդգրկում է IX-XI դդ.: Այն սկսվում է Արաբական խալիֆայության IX դարում հայության հանդեպ կիրառած բռնի քաղաքականությամբ և ավարտվում Բյուզանդական կայսրության վարած անհեռատես քաղաքականության և սելջուկ-թուրքերի բռնաճնշումներով, որոնք արդեն XI դարում հանգեցրին հայության արտագաղթերի: Ատենախոսությունը ունի նաև որոշակի ժամանակագրական շեղումներ: Այս հանգամանքը պայմանավորված է հայկական իշխանությունների կործանման պատճառներին անհրաժեշտ անդրադարձով՝ ներկայացնելով մինչև XII դ. առաջին տասնամյակը տեղի ունեցած իրադարձությունները:

Ատենախոսությունը չի անդրադառնում Կիլիկիայում Ռուբինյան իշխանության խնդիրներին, քանի որ այն ի տարբերություն մյուս հայկական իշխանությունների, գոյատևեց, կերտեց փառահեղ պատմություն և դրանով իսկ մշտապես գտնվում է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում<sup>1</sup>: Ուսումնասիրությունում ներկայացված է առանձին իշխանությունների առնչությունը Ռուբինյանների հետ:

**Արենախոսության աղբյուրագիտական հենքը և հիմնախնդրի ուսումնասիրության աստիճանը:** Ատենախոսության հիմքում հայկական, ասորական, բյուզանդական, արաբական և լատինական աղբյուրներն են:

Հայկական սկզբնաղբյուրներից օգտվել ենք պատմիչ Հովհաննես Դրաստիսանակերտցու երկից: Պատմիչը, լինելով արաբական շրջանի գաղթերի ժամանակակիցը, նկարագրել է արաբների բռնաճնշումները

---

<sup>1</sup> Մասնավորապես տե՛ս Միքայելյան Գ., Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Եր., 2007, Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, Եր., 2007, Dédeyan G., Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés, v. 1, Lisbonne, 2003, Քասունի Ե., Ռուբեն Ա եւ Ռուբինեան իշանութեան հիմնադրութիւնը, Պէյրութ, 1972, Rüdts-Collenberg W.H., The Rupenids, Hethumides and Lusignans, The structure of the Armeno-Cilician dynasties, Paris, 1963 և այլն:

Հայաստանում: Թեմայի վերաբերյալ տեղեկությունների շարքում արժեքավոր է հայ իշխանների բռնագաղթերի նկարագրումը<sup>2</sup>:

Արժեքավոր տեղեկություններով առանձնանում են Թովմա Արծրունու և Անանուն պատմիչի երկերը: Ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ եզակի տեղեկություններ են արձանագրվել ինչպես արաբների բռնի գաղթեցման քաղաքականության վերաբերյալ, այնպես էլ Վասպուրականի Սենեքերիմ Արծրունու արտագաղթի պատճառների և արտագաղթածների թվաքանակի վերաբերյալ<sup>3</sup>:

Ուսումնասիրվող հիմնահարցի հետազոտման համար խիստ օգտակար են եղել Ստեփանոս Տարոնեցու<sup>4</sup> և Արիստակես Լաստիվերտցու<sup>5</sup> աշխատությունները:

Քննվող թեմայի վերաբերյալ կարևոր են Գրիգոր Մագիստրոսի «Թղթերը»: Գրիգոր Մագիստրոսը, լինելով ժամանակի նշանավոր ռազմա-քաղաքական գործիչներից մեկը, շատ դեպքեր և իրադարձություններ նկարագրել է ականատեսի աչքերով: Մեր հետազոտության համար հատկապես կարևոր է Անիի Բագրատունյաց թագավորության իրադարձությունների նկարագրությունը: Գրիգոր Մագիստրոսի վկայությունից պարզ է դառնում նաև նրա՝ սեփական տիրույթների դիմաց Միջագետքում նոր հողեր ստանալը<sup>6</sup>:

Հայկական սկրնադոյությունների շարքում թեմային վերաբերող փաստառատ նյութով հարուստ է Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը»: Պատմիչը, շատ դեպքերի ժամանակակիցը լինելով, նկարագրել է Կիլիկիայում, Հյուսիսային Ասորիքում և Կապադովկիայում հայկական թագավորական ընտանիքների և իշխանությունների ձևավորման նախահիմքերը<sup>7</sup>:

---

<sup>2</sup> Տե՛ս «Հովհաննես Դրասխանակերտցույ Պատմություն Հայոց», Մատենագիրք Հայոց, ԺԱ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010:

<sup>3</sup> Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Մատենագիրք Հայոց, ԺԱ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010:

<sup>4</sup> Տե՛ս Ստեփանոս Տարանեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Մատենագիրք Հայոց, ԺԵ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Բ, Եր., 2011:

<sup>5</sup> Տե՛ս «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցույ», Մատենագիրք Հայոց, ԺԶ հ., ԺԱ դար, Եր., 2012:

<sup>6</sup> Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, բնագիրն յառաջաբանով եւ ծանօթագրութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեաց Կոստանեանց Կ., Աղեքսանդրապօլ, 1910, Գրիգորի Մագիստրոսի թուղթ եւ չափաբերականք, Մատենագիրք Հայոց, ԺԶ հ., ԺԱ դար, աշխատասիրութեամբ՝ Մուրադյան Գ., Եր., 2012:

<sup>7</sup> Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:

Ատենախոսության համար կարևոր սկզբնաղբյուրներ են Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը»<sup>8</sup>, Կիրակոս Գանձակեցու «Հայոց Պատմությունը»<sup>9</sup>, Սամվել Անեցու և շարունակողների «Ժամանակագրությունը»<sup>10</sup>, Մխիթար Այրիվանեցու երկերը<sup>11</sup>:

Հայկական սկզբնաղբյուրների շարքում արժեքավոր է նաև XIII դ. պատմիչ Վարդան վարդապետի հավաքածու պատմությունը<sup>12</sup>:

Հետազոտության համար կարևոր է Ներսես Շնորհալու «Բանք Չափա» աշխատությունը: Շատ դեպքերի ժամանակակից լինելով՝ Շնորհալին կարևոր վկայություններ է բերել Գող Վասիլի վերաբերյալ<sup>13</sup>:

Սկզբնաղբյուրների շարքում արժեքավոր են նաև հայերեն ձեռագրերի հիշատակարանները<sup>14</sup> և տարբեր մանր ժամանակագրությունները<sup>15</sup>:

Ասորական սկզբնաղբյուրները ևս առանցքային տեղեկություններ են հաղորդում Հյուսիսային Ասորիքում, Կիլիկիայում, Միջագետքում հայերի հաստատվելու, ինչպես նաև հայ իշխանների ծավալած գործունեության վերաբերյալ: Ասորական աղբյուրներից առաջնակարգ նշանակություն ունի XII դ. պատմիչ Միքայել Ասորու «Ժամանակագրությունը»<sup>16</sup>:

---

<sup>8</sup> Տե՛ս «Սմբատայ Սպարապետի Տարեգիրք», Վենետիկ, 1956:

<sup>9</sup> Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Մելիք-Օհանջանյան Կ.Ա., Եր., 1961:

<sup>10</sup> Տե՛ս Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կարեն Մաթևոսյանի, Եր., 2014:

<sup>11</sup> Տե՛ս Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, «Մխիթար Այրիվանեցու պատմութիւն ժամանակագրական», Ս.Պետերբուրգ, 1867:

<sup>12</sup> Տե՛ս «Մեծին Վարդանայ Բարձրբերդցոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի» ս.Ղազար, Վենետիկ, 1862:

<sup>13</sup> Տե՛ս Ներսես Շնորհալոյ հայոց կաթողիկոսի Բանք Չափա, Վենետիկ, 1928:

<sup>14</sup> Տե՛ս Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատակարան ձեռագրաց, հ. Ա (Ե դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբեանց», հ. Գ., կազմեց՝ Նորայր եպիսկոպոս Պողարեան, Երուսաղէմ, 1968, «Հայերեն ձեռագիր հիշատակարաններ», Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ՝ Ա. Ս. Մաթևոսյանի, Եր., 1988, Տաշեան Հ., «Յուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», 1895:

<sup>15</sup> Տե՛ս «Մանր ժամանակագրություններ» XIII-XVIII դդ., հ. I, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Եր., 1951, հ. II, կազմեց՝ Վ.Ա. Հակոբյան, Եր., 1956:

<sup>16</sup> Տե՛ս Michel le Syrien, Chronique. Editée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, t. III. Paris 1905, «Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորոց պատրիարքի», Երուսաղէմ, 1870, «Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորոց պատրիարքի», Յերուսաղէմ, 1871:



Ատորական սկզբնաղբյուրներից կարևոր են նաև Անանուն Եդեսացու<sup>17</sup> և Բար Հեբերուսի «Ժամանակագրությունը»-ները<sup>18</sup>:

Անտիոքում հայության առկայության, ինչպես նաև Վասպուրականի հայության արտագաղթին վերաբերող արժեքավոր վկայություններ կան պատմիչ Յահյա Անտիոքացու աշխատությունում<sup>19</sup>:

Մեզ հետաքրքրող շրջանի վերաբերյալ բյուզանդական սկզբնաղբյուրները առանձնանում են փաստառատությամբ և շատ դեպքերում եզակի աղբյուր են հանդիսանում: Բյուզանդական աղբյուրների շարքում խնդրո առարկա շրջանի վերաբերյալ առատ տեղեկություններով աչքի է ընկնում Կոստանդին Ծիրանածնի պատմական երկը: Հատկապես արժեքավոր են պատմիչի հաղորդած եզակի տեղեկությունները Լիկանդոսի բանակաթեմի հիմնադրման և հիմնադրի վերաբերյալ<sup>20</sup>: Այդ բանակաթեմը առանձնահատուկ և որոշիչ դեր ունի հայ-բյուզանդական հարաբերություններում:

Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում իշխանապետ Փիլարտոս Վարաժնունու գործունեության և հայկական իշխանությունների մասին կարևոր տեղեկություն է հաղորդել պատմիչ Հովհաննես Սկիլիցեսը իր պատմական երկում<sup>21</sup>:

Մերձավոր Արևելքում ձևավորված հայկական իշխանությունների մասին տեղեկություններ կան Միքայել Ատտալիատեսի երկում<sup>22</sup>:

---

<sup>17</sup> Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 12, Ատորական աղբյուրներ, Բ, Անանուն Եդեսացի, ժամանակագրություն, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Լ. Հ. Տեր-Պետրոսյանի, Եր., 1982:

<sup>18</sup> Տե՛ս The Chronography of Gregory Abu'l-Faraj, 1225-1286, the son of Aaron, the Hebrew physician, commonly know as Bar Hebraeus, being the first par of his political history of te world, translated from te Syriac by Ed. E.A.W. Budge. London, 1932 (Reprinted Amsterdam 1976):

<sup>19</sup> Տե՛ս Извлечения из летописи Яхьи Антиохиского, издал, перевел и объяснил Барон В.Р. Розен. Записки императорской Ак. Наук, т. 44. СПб., 1883:

<sup>20</sup> Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, Կոստանդին Ծիրանածին, թարգմանությունը բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հրաչ Բարթիկյանի, Եր., 1970:

<sup>21</sup> Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 10, Բյուզանդական աղբյուրներ, Գ, Հովհաննես Սկիլիցես, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի, Եր., 1979:

<sup>22</sup> Տե՛ս Michael Attaliotae, Historia, Corpus scriptorum historiae Byzantinae, Bonnae: impensis E. Weberi, 1853, «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 17, Բյուզանդական աղբյուրներ, Զ, Միքայել Ատտալիատես Պատմություն, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի, Եր., 2015:

Բյուզանդական աղբյուրների շարքում ուշագրավ են նաև Աննա Կոմնենոսի<sup>23</sup> և Թեոփանեսի Շարունակողի պատմական աշխատությունները<sup>24</sup>:

Ատենախոսության համար առանցքային կարևորություն ունեն արաբ մատենագիրների հաղորդած տեղեկությունները: Արաբական արշավանքների և հայության տեղահանության վերաբերյալ առատ նյութ է պարունակում Բալագուրու երկը<sup>25</sup>:

Արաբական սկզբնաղբյուրների շարքում առանձնանում են նաև Իբն ալ-Ասիրի<sup>26</sup>, Աբու-Լ-Ֆիդայի<sup>27</sup> և Ուսամա իբն Մունկիզի աշխատությունները<sup>28</sup>:

Լատինական սկզբնաղբյուրները կարևոր տեղ ունեն հայ իշխանների և խաչակիրների փոխհարաբերությունները լուսաբանելու գործում: Լատին աղբյուրներից խիստ արժեքավոր է Գիյոմ (Ուիլյամ) Տյուրացու տարեգրությունը<sup>29</sup>:

Խնդրո առարկա թեմայի առանձին բաղադրիչներին նախկինում անդրադարձ եղել է: Հայ ուսումնասիրողներից հայության արտագաղթին և առանձին հայ իշխանների գործունեությանն առաջիններից մեկը անդրադարձել է Մ. Չամչանցը իր «Հայոց Պատմություն» քննական աշխատությունում<sup>30</sup>:

Ատենախոսության համար կարևոր են Ղ. Ալիշանի մի շարք ուսումնասիրությունները: Խնդրո առարկա թեմային են վերաբերում Կիլիկյան

---

<sup>23</sup> Տե՛ս Анна Комнина, «Алексиада», Вступительная статья, перевод, комментарий Я. Н. Любарского, М., 1965:

<sup>24</sup> Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 15, Բյուզանդական աղբյուրներ, Ե, Թեոփանեսի Շարունակող, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի, Եր., 1990:

<sup>25</sup> Տե՛ս Բալագուրի, Երկրների նվաճումը (Ֆուտուհ ալ-Բուլդան), Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 16, Արաբական աղբյուրներ, հ. 3, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, ներած. և բնագրից թարգմ.՝ Տեր-Ղևոնդյան Ա: Կազմ., խմբ., ծանոթագր. և ցանկ. հեղ.՝ Վ. Տեր-Ղևոնդյան, Եր., 2005, Հմմտ. «Kitab Futuh Al-Buldan of Al-Balhaduri», trans, by P. Hitti, New York, 1916:

<sup>26</sup> Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 11., Արաբական աղբյուրներ, Բ. Իբն Ալ-Ասիր, թարգմանությունը բնագրից, առաջաբան և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Եր., 1981:

<sup>27</sup> Տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց՝ Հ. Նալբանդյան, Եր., 1965:

<sup>28</sup> Տե՛ս Усама ибн Мункиз, Книга назидания, пер. М. А. Салье, М., 1958:

<sup>29</sup> Willermi Tyrensis Archiepscoopi, Historia rerum in partibus transmarinis gestarum, RHC, Hist. occidentaux, t. 1, Paris, 1844:

<sup>30</sup> Տե՛ս Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, հ. Բ, Վենետիկ, 1785, Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, հ. Գ, Վենետիկ, 1786:

Հայաստանի պատմությանը նվիրված «Սիսուան» աշխատությունը: Ատենախոսության համար կարևոր է «Շնորհալի եւ պարագայ իր» ուսումնասիրությունը<sup>31</sup>:

Հայ կաթողիկոսական աթոռների հիմնման և Կիլիկիայի վերաբերյալ առանցքային շատ հարցերի լուսաբանման համար կարևոր է Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում» աշխատությունը<sup>32</sup>:

Հայ-բյուզանդական հարաբերությունների և կայսրության սահմաններում գործունեություն ծավալած հայ իշխանների վերաբերյալ առանցքային կարևորություն ունի Ն. Ադոնցի հետազոտությունները<sup>33</sup>:

Հայ գաղթաշխարհի պատմության ընդհանրական նկարագրության առաջին փորձը կատարել է Ա. Ալպոյաճյանը իր մի շարք ուսումնասիրություններում<sup>34</sup>: Հայ գաղթաշխարհի պատմությանը անդրադարձել և ուսումնասիրություններ են հրատարակել նաև Հ. Աճառյանը<sup>35</sup>, Ա. Աբրահամյան<sup>36</sup> և Միքայելյանը<sup>37</sup>:

Հայագիտության մեջ միջնադարի հայ խոշոր ռազմաքաղաքական գործիչ Փիլարտոս Վարաժունու գործունեությանը առաջինը անդրադարձել և կարևոր մենագրություն է հեղինակել Եղիա Քասունին<sup>38</sup>:

Կիլիկյան Հայաստանի պատմությունը ուսումնասիրող կարևոր հետազոտություն է գրել Գ. Միքայելյանը՝ հրկթացս անդրադառնալով Կիլիկիայի և շրջակայքի հայկական իշխանություններին<sup>39</sup>:

Ատենախոսության համար մեծ արժեք ունեն նշանավոր հայագետ Հ. Բարթիկյանի՝ հայ-բյուզանդական հարաբերություններին վերաբերող

---

<sup>31</sup> Տե՛ս Ալիշան Ղ., Սիսուան. Համագրություն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, Ալիշան Ղ., Շնորհալի եւ պարագայ իր, Վենետիկ, 1873:

<sup>32</sup> Տե՛ս Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, հ. Ա., Էջմիածին, 2001:

<sup>33</sup> Տե՛ս Ադոնց Ն., Երկեր, հ. Ե, Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ, Երևան, 2012, Ադոնց Ն., Երևելի հայեր, Երևան, 2015, Ադոնց Ն., Լիկանդոսի բանակաթեմը հայ-բյուզանդական հարաբերություններում, ֆրանսերենից թարգմանեց Պողոսյան Վ., «Էջմիածին», ԿԱ տարի, հոկտեմբեր-նոյեմբեր, Էջմիածին, ԿԲ, 2006, էջ 48-69:

<sup>34</sup> Տե՛ս Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, Անթիլիաս, 2015, Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ, Գահիրէ, 1955, Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եվրոկիոյ Հայոց, Գահիրէ, 1952:

<sup>35</sup> Տե՛ս Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Եր., 2002,

<sup>36</sup> Տե՛ս Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Եր., 1964:

<sup>37</sup> Տե՛ս Միքայելյան Վ., Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.) հ. Բ, Եր., 2003:

<sup>38</sup> Տե՛ս Կոմագենացի (Եղիա Քասունի), Փիլարտոս հայր. կիլիկեայ ճոխութեան բուն հիմնադիրը, Հալեպ, 1930:

<sup>39</sup> Տե՛ս Միքայելյան Գ., Նշվ. աշխ.:

աշխատությունները<sup>40</sup>: Սելջուկ-թուրքերի նվաճողական արշավանքների և հայերի նկատմամբ իրականացված քաղաքականության մի շարք հարցեր լուսաբանվել են Հ. Մանանդյանի<sup>41</sup> և Ա. Բոռնազյանի ուսումնասիրություններում<sup>42</sup>:

Վասպուրականի թագավորության պատմության հետազոտման և վասպուրականցիների գաղթի համար կարևոր է Բ. Հարությունյանի ուսումնասիրությունը<sup>43</sup>:

Կիլիկիայի հայկական իշխանության ուսումնասիրության համար կարևոր են Երվանդ Քասունու աշխատություններից հատկապես «Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արեւելքի քաղաքական հողվոյթին մեջ (1080-1137)» ուսումնասիրությունը, ինչպես նաև «Ռուբեն Ա եւ Ռուբինեան իշխանութեան հիմնադրութիւնը» մենագրությունը<sup>44</sup>:

Արաբների նվաճողական արշավանքների վերաբերյալ արժեքավոր են Ա. Տեր-Ղևոնդյանի<sup>45</sup> և Ա. Եղիազարյանի<sup>46</sup> ուսումնասիրությունները:

XI դարի հայկական իշխանությունների պատմության լուսաբանման առումով խիստ կարևոր են ֆրանսիահայ պատմաբան Ժերար Դեդեյանի «Հայերը հույների, մահմեդականների և խաչակիրների միջակայքում» արժեքավոր աշխատությունները<sup>47</sup>:

---

<sup>40</sup>Տե՛ս Բարթիկյան Հ., «Բյուզանդական» Խոտամյանները և Հայաստանը, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա, Երևան, 2002, էջ 605-616, Բարթիկյան Հ., «Բյուզանդական տերմիններ», Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. 2., Եր. , 2006, Բարթիկյան Հ., Վասպուրականցիներ Բյուզանդական կայսրության ծառայության մեջ XI-XII դարերում, հ. Ա, էջ 717-736: Բարթիկյան Հ., Պետրոս Ա Գետադարձ և Կոստանդին IX Մոնոմախ, հ. Ա, էջ 593-600, Բարթիկյան Հ., «Գրիգոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման հարցի շուրջ», հ. Ա., էջ 265-274:

<sup>41</sup> Տե՛ս Մանանդյան Հ., Երկեր, հ. Բ, Եր. , 1978, հ. Գ, Եր. , 1977:

<sup>42</sup> Տե՛ս Բոռնազյան Ա., Հայաստանը և սելջուկները 11-12-րդ դդ., Եր. , 1980:

<sup>43</sup> Տե՛ս Հարությունյան Բ., Արժրույնյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Եր., 2016:

<sup>44</sup> Տե՛ս Քասունի Ե. Հ., Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնը Մերձաւոր Արեւելքի քաղաքական հողվոյթին մեջ (1080-1137), Պէյրութ, 1974, Քասունի Ե., Ռուբեն Ա., Նշվ. աշխ.:

<sup>45</sup> Տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Եր., 1965, Տեր-Ղևոնդյան Ա., «Հայոց իշխանը» արաբական տիրապետության ժամանակաշրջանում, Հոդվածների ժողովածու, Եր., 2003:

<sup>46</sup> Տե՛ս Եղիազարյան Ա., Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Եր., 2010, Եղիազարյան Ա., Աշոտ Ա Բագրատունի. թագավոր Հայոց (թագադրության թվականը և գահակալության տարիները), Եր., 2014:

<sup>47</sup> Տե՛ս Dédéyan G., Les Arméniens, vol. 1, նշվ. աշխ., Dédéyan G., Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés..., vol. 2, Lisbonne, 2003:

Խաչակիրների արշավանքների և հայ իշխանների հետ փոխհարաբերությունների արդյունքում ձևավորված մի շարք խնդիրների է անդրադարձել է Լ. Տեր-Պետրոսյանը իր «Խաչակիրները և հայերը» արժեքավոր երկհատորյակում<sup>48</sup>:

Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականությանը և Բյուզանդական կայսրության հետ հարաբերություններին հանգամանորեն անդրադարձել են Ա. Բոզոյանը<sup>49</sup> և Կ. Մուֆաֆյանը<sup>50</sup>:

Ատենախոսության համար արժեքավոր են նաև Կ. Մաթևոսյանի ուսումնասիրությունները՝ «Անի-Շիրակի պատմության էջեր», «Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս»<sup>51</sup>, «Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը»<sup>52</sup>:

Պատմատեղագրական մի շարք անհրաժեշտ հարցերի լուսաբանման համար խիստ կարևոր են տեղագրագիտական բառարանները և ուսումնասիրությունները<sup>53</sup>:

Ակնհայտ է, որ խնդրո առարկա հիմնահարցը հենքային քննության կարիք ունի, որն էլ փորձել ենք ներկայացնել այս ուսումնասիրության մեջ:

### **Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը:**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից ու հավելվածից:

**Ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, հստակեցված են ատենախոսության ժամանակագրական և

---

<sup>48</sup> Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, Եր., 2005, Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Բ:

<sup>49</sup> Տե՛ս Բոզոյան Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թթ., Եր., 1988:

<sup>50</sup> Տե՛ս Կլոդ Մուֆաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Եր., 2001, Mutafian C., L'armenie du Levant (XI -XIV siècle), tom. I, Paris, 2012:

<sup>51</sup> Տե՛ս Մաթևոսյան Կ., Անի-Շիրակի պատմության էջեր, Եր., 2010, Մաթևոսյան Կ., Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Եր., 2015:

<sup>52</sup> Տե՛ս Մաթևոսյան Կ., Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Էջմիածին, 1997:

<sup>53</sup> Տե՛ս Hild Friedrich und Marcell Restle, “Kappadokien (Kappadokia, Charsianon, Sebasteia und Lykandos)”, Tabula Imperii Byzantini, Wien 1981, Hild Friedrich und Hellenkemper Hansgerd., “Kilikien und Isaurien”, Tabula Imperii Byzantini, Band. 5, teil 1, Wien 1990, Հակոբյան Թ. և այլք, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, (Ա-Դ), Եր., 1986, Հակոբյան Թ. և այլք, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, (Դ-Կ), Եր., 1988, Հակոբյան Թ. և այլք, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, (Կ-2), Եր., 1991, Յովհաննէսեան Մ., Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքները, Վենետիկ, 1989:

աշխարհագրական շրջանակները, ներկայացված են հետազոտության գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը, նպատակներն ու խնդիրները, տրված է հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը:

**ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ** կրում է «**Հայության գաղթերը և հաստատումը Կիլիկիայում, Հյուսիսային Ասորիքում ու Միջագետքում IX-X դարերում**» վերնագիրը: **Առաջին ենթագլխում** («Հայության գաղթերը IX դարում և հաստատումը Հյուսիսային Ասորիքում ու Միջագետքում») ներկայացվում են IX դարում Արաբական խալիֆայության կողմից Հայաստանում իրականացրած բիրտ քաղաքականության հետևանքով սկիզբ առած հայ բնակչության գաղթերը, ինչպես նաև կազմակերպված բռնագաղթերը: Խնդրո առարկա ժամանակաշրջանում հայության հանդեպ նույն բռնի քաղաքականությունն էր իրականացնում նաև Բյուզանդական կայսրությունը, որի հետևանքով հայությունը տեղափոխվում էր վերոնշյալ շրջաններում:

**Երկրորդ ենթագլխում** («Հայերը Լիկանդոսի բանակաթեմում») քննության է առնվում Լիկանդոսի բանակաթեմում հայկական իշխանության հիմնադրման խնդիրը: Ներկայացվում են իշխանության հիմնադրի՝ Մլեհ Ա-ի ծավալած գործունեությունը, տեղում հաստատված գաղթական հայության հովանավորումը և պաշտպանության խնդիրները: Անդրադարձ է կատարվել նաև իշխանության ժառանգորդներին և նրանց ծավալած գործունեությանը:

**Երրորդ ենթագլխում** («Հայության գաղթերը X դարում») քննվել է Բյուզանդական կայսրության կողմից Հյուսիսային Ասորիքում հայ բնակչություն բնակեցնելու քաղաքականությունը: Ուսումնասիրվել են X դ. Անտիոքում հայերի բարձրացրած ապստամբության շարժառիթները, ինչպես նաև՝ Կիլիկիայում, Հյուսիսային Ասորիքում եպիսկոպոսական աթոռների հիմնման պատճառները:

**ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ** կրում է «**Հայկական իշխանությունների ստեղծումը Փոքր Հայքում-Կապադովկիայում և Դաշտային ու Քարուտ Կիլիկիայում XI դարում**» վերնագիրը:

**Առաջին ենթագլխում** («Վասպուրականի հայության գաղթը Փոքր Հայք և Կապադովկիա 1022 թ.») ցույց են տրվել Վասպուրականի թագավորության մղած պայքարը արտաքին վտանգի դեմ, ներկայացվել են թագավորության անկման պատճառները և կործանումը: Քննության են ենթարկվել Վասպուրականի հայության արտագաղթի տարեթիվը և կատարվել է եզրահանգում, որ այն տեղի է ունեցել 1022 թ.: Ներկայացվել է Սենեբերիմ Արծրունու և ժառանգների՝ Փոքր Հայքում և Կապադովկիայում նոր տարածքներ ստանալու խնդիրը, քննվել է արտագաղթածների թվաքանակը, որը սկզբնաղբյուրների վկայությամբ հասնում էր շուրջ 14 հազարի: Ներկայացվել է սելջուկ-թուրքերի 1059 թ. Սեբաստիայի ուղղությամբ կատարած նվաճողական արշավանքը, և դրա պատճառով հայության բռնի արտագաղթը, կայսրության կրոնական բիրտ քաղաքականությունը և

Կապադովկիայում հաստատված Բագրատունի վերջին թագավորների ու Սենեքերիմյաների համագործակցությունը:

**Երկրորդ ենթագլխում** («Անիի Գագիկ Բ Բագրատունի թագավորի հաստատումը Կապադովկիայում») քննության են առնվել Բագրատունյաց թագավորության անկման պատճառները, արտաքին ճնշման արդյունքում Գագիկ Բ-ի՝ թագավորությունից զրկվելու, Կապադովկիայում նոր տարածքներ ստանալու և այնտեղ գործունեություն ծավալելու փաստերը: Ներկայացվել են Գագիկ Բ-ի և նրա ժառանգների թագավորության վերականգնմանը միտված ջանքերը:

**Երրորդ ենթագլխում** («Կարսի Գագիկ թագավորի գաղթը») քննվել են Կարսի թագավորության հիմնման, նրա ընդգրկած տարածքների, Գագիկ Կարսեցու՝ սելջուկ-թուրքերի հարձակումներին դիմակայելու խնդիրները: Ներկայացվել են նաև արտաքին գործոնի ազդեցությամբ Գագիկ Կարսեցու ընդարձակ թագավորության հանձնումը կայսրությանը, և Կապադովկիայում նոր տարածքներ ստանալու և գաղթելու իրողությունները: Քննության են ենթարկվել Գագիկ Կարսեցու Ծամնդավում կաթողիկոսական աթոռի հաստատման խնդիրները, ինչպես նաև Կապադովկիայում Գագիկ Կարսեցու մահից հետո նրա դստեր՝ Մարիամի իշխանության ժառանգման հիմնախնդիրները:

**Չորրորդ ենթագլխում** «Ապլղարիպ Արծրունու իշխանությունը Դաշտային Կիլիկիայում» ցույց են տրվել Ապլղարիպ Արծրունու Վասպուրականից գաղթելու պատճառները, Կապադովկիայում Գագիկ Բ Անեցու մոտ հաստատվելը, և Մանազկերտի ճակատամարտից հետո Կիլիկիա անցելը ու այնտեղ կայսրությունից նոր տիրույթներ ստանալը:

**Հինգերորդ ենթագլուխը** կրում է «Օշին Մայրաջրեցու գաղթը Կիլիկիա» ենթավերնագիրը: 11-րդ դարում սելջուկ-թուրքերի դեպի Հայաստան իրականացրած արշավանքերից հետո Գանձակի մոտ գտնվող իր տիրույթից՝ Մայրաց ջուր բնակավայրից, Օշին իշխանը 1073 թ. իր ընտանիքի, ժողովրդի մի մասի և զորագնդի ու իշխանների հետ գաղթում է Քարուտ Կիլիկիա: Ներկայացվել են Կիլիկիայում Օշինի հաստատվելը, իր դաշնակից Ապլղարիպ Արծրունուց Լամրոնի բերդը ստանալը և այնտեղ ծավալած գործունեությունը:

**Արենախոսության երրորդ գլուխը** կրում է «Հայկական իշխանությունները Հյուսիսային Ասորիքում» վերնագիրը:

**Առաջին ենթագլխում** («Փիլարտոս Վարաժնունու իշխանությունը») ներկայացվել են 11-րդ դարում Բյուզանդական կայսրության թուլացումը, 1071 թ. Մանազկերտում սելջուկ-թուրքերից կրած ծանր պարտությունը, որից օգտվում էին զինվորական ծառայության մեջ գտնվող մի շարք գործիչներ, այդ թվում՝ Փիլարտոս (Վահրամ) Վարաժնունին, ում հաջողվում է ստեղծել կենտրոնաձիգ իշխանություն: Քննության են առնվել 1071 թ. Մանազկերտի

ճակատամարտից հետո Փիլարտոս Վարաժնունու ինքնուրույն գործունեության համար հիմք հանդիսացած նախադրյալները, 20 հազարանոց զորքի կենտրոնացումը իր ձեռքում, Մարաշի (Գերմանիկ) գրավումը և այն իր իշխանանիստը դարձնելը: Անդրադարձ է կատարվել Սասունի Թռռնիկ Մամիկոնյան իշխանից կրած պարտության և Կիլիկիայի ու Հյուսիսային Ասորիքի տարածքների գրավման հանգամանքներին: Ներկայացվել են Փիլարտոսի հզորությունը ի ցույց դնող մեկ այլ գործոնի՝ նրա ջանքերով կաթողիկոսական աթոռի հաստատումը իշխանության սահմաններում, որը առանցքային նշանակություն ուներ իշխանության սահմաններում հաստատված սովարաթիվ հայությանը հովվելու գործում: Ցույց են տրվել Փիլարտոսի իշխանության անկման պատճառները և անկման հետևանքով ձևավորված հայկական իշխանությունները:

**Երկրորդ ենթագլխում** («Գող Վասիլի իշխանությունը») քննվել են Գող Վասիլի ծագումը, «Գող» մականվան ստուգաբանությունը: Ներկայացվել են Փիլարտոս Վարաժնունու մահից հետո Գող Վասիլի ծավալած ինքնուրույն գործունեությունը, հզոր իշխանություն ստեղծելը, մարտունակ բանակ ձևավորելը, որի հիմքը հայոց ազատանու հավատարիմ յուրայիններն էին:

Ներկայացվել են կաթողիկոսական աթոռի հաստատումը Գող Վասիլի իշխանության տիրույթում՝ Շուղղում՝ Սև լեռան Կարմիր վանքում:

**Երրորդ ենթագլխում** («Տղա Վասիլի իշխանությունը») անդրադարձ է կատարվել խաչակիրների և կայսրության միջև կնքված 1108 թ. Դեաբոլյան պայմանագրին, Եփրատացիքում և Միջագետքում հաստատված հայկական իշխանություններին, որոնք կործանվեցին խաչակիրների կողմից: Դրանցից մեկն էլ Քեսունի իշխան Գող Վասիլի ժառանգորդ (որդեգիր) Տղա Վասիլի իշխանությունն էր: Քննվել է այն հանգամանքը, որ Գող Վասիլի մահից հետո իշխանությունը նախ գտնվել է նրա կնոջ ձեռքում և հետո անցել Տղա Վասիլին: Վերջինս, արտաքին ճնշումներին դիմակայելով, խարդավանքերի գոհ է դառնում և իշխանությունը կորցնելուց հետո հեռանում Կոստանդնուպոլիս:

**Չորրորդ ենթագլխում** («Բագրատ իշխան Ռավանդանի») ներկայացվել են Գող Վասիլի եղբայր Բագրատի համագործակցությունը խաչակիրների հետ և նրանց կողմից, իբրև առանձնաշնորհում, Ռավանդան բերդ-ամրոցը ստանալը, որտեղ Բագրատը փորձում էր ստեղծել իշխանություն, ինչը նրան չհաջողվեց, իսկ տարածքները անցան Եդեսիայի դուքս Բալդուին Բուրգացուն:

**Հինգերորդ ենթագլխում** («Գրիգոր Մագիստրոս Պահլավունու տիրույթները Հյուսիսային Միջագետքում») ուսումնասիրվել են Գրիգոր Մագիստրոսի տարածքների (Կայեն, Կայծոն) փոխանակման խնդիրները, Միջագետքում նոր տարածքներ ստանալը և ի մի են բերվել հայրենիքում և կայսրությունից տարբեր ժամանակներում ստացած պատվատիտղոսները:



**Վեցերորդ ենթագլխում** («Անտիոքի հայ դուքսեր») ներկայացվել են Անտիոքի հայազգի դուքսերի ծավալած գործունեությունը: Քննվել են Պեխտի և Խաչատուրի վերաբերյալ պատմական աղբյուրների հաղորդած նյութերը: Ներկայացվել են վերջիններիս անձերի վերաբերյալ պատմագիտության մեջ առկա տարակարծությունները և կատարվել են դիտարկումներ: Անդրադարձ է կատարվել Անտիոքի հայազգի դուքս Գրիգոր Մագիստրոսի որդի Վասակ Պահլավունու ինքնուրույն գործունեությանը, ինչն էլ առիթ հանդիսացավ Անտիոքում կազմակերպված դավադրության և նրա մահվան:

**Յոթերորդ ենթագլխում** («Ապլլարիպ և Լիկոս Պահլավունիների իշխանությունը») ներկայացվել են Գրիգոր Մագիստրոսի թոռների, Անտիոքի դուքս Վասակ Պահլավունու որդիների՝ Ապլլարիպի և Լիկոսի իշխանությունը, որը, ի վերջո, գրավեց Եդեսիայի դուքս Բալդուին Բուրգացին:

**Եզրակացությունում** ի մի են բերվել ատենախոսության հիմնական արդյունքները

- Հայ բնակչության գաղթի ուղղությունը հիմնականում որոշում էին գաղթը կազմակերպողները՝ արաբները և բյուզանդացիները: Արաբները հայ գաղթական բնակչությանը տեղակայում էին Միջագետքում և Հյուսիսային Ասորիքում՝ հայաթափելով ու արաբական ցեղերով բնակեցնելով Հայաստանը: Հայության գաղթերը նախաձեռնելիս բյուզանդացիների հիմնական նպատակը հայ ազնվականությանը ու զինվորականությանը ուշադրության կենտրոնում պահելն էր և այդ պատճառով տեղակայում էին սահմանային գոտիներում՝ կայսրության պաշտպանունակության բարձրացման համար: Գաղթը կատարվում էր քաղաքական նկատառումներով:

- IX-XI դարերում հայրենիքից հայության արտագաղթերը պայմանավորված էին օտար նվաճողների կողմից հայ բնակչության նկատմամբ կիրառած բռնի տեղահանություններով, հարկային ծանր իրադրության ստեղծմամբ ու Բյուզանդիայի կողմից նոր տարածքների տրամադրմամբ: Այս գործոններից յուրաքանչյուրը այլընտրանք չէր թողնում հայությանը և հանգեցնում էր ժողովրդագրական զանգվածների մեծ տեղաշարժի:

- Հայության խմբերը Բյուզանդիայի կողմից տեղափոխվում կամ նրանից առանձնաշնորհում ստացածները տարվում էին Կիլիկիա և մերձակա երկրամասեր:

- IX դարում արաբական վարչակարգի դիրքերի թուլացումը և Բյուզանդական կայսրության՝ տարածաշրջանում հաստատուն քաղաքականության իրականացումը, ինչպես նաև կայսերական բանակում հայ զորահրամանատարներին տրամադրված առանձնաշնորհումը առիթ հանդիսացավ Լիկանդոսում հայկական իշխանության ձևավորման համար:

- Բյուզանդական կայսրության վարած արտաքին քաղաքականության արդյունքում կործանվեցին Վասպուրականի, Անիի և Կարսի թագավորությունները: Որպես փոխհատուցում՝ կայսրությունը հայոց թագավորներին Կապադովկիայում նոր տիրույթներ տրամադրեց, ինչը հիմք հանդիսացավ այստեղ հայկական իշխանություններ ձևավորելուն:

- Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո հայրենիքից հեռացած իշխաններից Գրիգոր Մագիստրոսը տարածքներ ստացավ Միջագետքում: Նրա մահից հետո էլ ժառանգները իրենց վերահսկողության ներքո պահեցին մի շարք տարածքներ և կարևոր դեր կատարեցին հայության համախմբման գործում:

- Շուտով գաղթերի և վերաբնակեցման հետևանքով Լեռնային Կիլիկիայի հարակից շրջաններում, միմյանց հաջորդելով, սկիզբ են առնում հայկական իշխանություններ կարճատև և երկարատև պատմական հեռանկարում:

- XI դարում Կիլիկիայում, Հյուսիսային Ասորիքում և Միջագետքում հայ ազգաբնակչության համախմբման և հայկական իշխանությունների ստեղծման համար կարևոր խթան հանդիսացավ կայսրության դիրքերի թուլացումը: Բյուզանդական կայսրությունը Մանազկերտում սելջուկ-թուրքերից կրում է ծանր պարտություն, որից հետո կայսրությունում հաստատվում է անիշխանություն: Այդ հանգամանքից օգտվում են կայսրությունում ծառայության մեջ գտնվող մի շարք գործիչներ, այդ թվում՝ Փիլարտոս Վարաժնունին: Դժվար է գերազնահատել Փիլարտոսի խաղաղացած այն մեծ դերը, որ նա իրականացնում է գաղթահայության համախմբման, վերոնշյալ տարածքներում հայկական իշխանությունների պաշտպանության և հովանավորման գործում: Նրա գերագույն նպատակն էր ստեղծել կենտրոնաձիգ իշխանություն, որի կորիզը կազմելու և գերակա դերում գտնվելու էր հայ տարրը:

- Փիլարտոս Վարաժնունու իշխանության կործանումից հետո նրա հրամանատարության ներքո գտնվող մի շարք զորահրամանատարներ տեղ են դառնում իր տիրույթներին: Փիլարտոսի գործի շարունակողը հանդիսացավ Քեսունի հայ իշխան Գող Վասիլը, ով այդ մականունը ստանում է հակառակորդի վրա անակնկալ հարձակումներ իրականացնելու պատճառով:

- Հայ ազգաբնակչության արտագաղթի պատճառ հանդիսացան նաև XI դարում սելջուկ-թուրքերի նվաճողական արշավանքները: Այս նվաճումների արդյունքում, երկյուղ ունենալով սելջուկ-թուրքերից, Կարսի վերջին թագավոր Գագիկ Կարսեցին իր ընդարձակ թագավորությունը հանձնեց Բյուզանդական կայսրությանը՝ փոխարենը տարածքներ ստանալով Կապադովկիայում: Վերոնշյալ նվաճողների բռնաճնշումներից խույս տալու համար Գանձակի հայ իշխան Օշին Գանձակեցին ևս 1073 թ. դուրս է գալիս իր բնակավայրից՝ Մայրաց ջրից, և ընտանիքի ու ազատագնդի հետ հաստատվում Կիլիկիայում:

- XI դարի երկրորդ կեսին և XII դարի առաջին տասնամյակում Մերձավոր Արևելքում հայկական իշխանությունների կործանման պատճառ հանդիսացան տարածաշրջանում հայտնված խաչակիրները: Սկզբնական շրջանում հայ իշխանները մեծ ոգևորությամբ ընդունեցին խաչակիրներին և սկսեցին համագործակցել:

- Տարածաշրջանը իրենց ենթարկելու համար խաչակիրները 1117 թ. Եդեսիայի կոմս Բալդուինի գլխավորությամբ՝ սկսում են նվաճողական արշավանքներ, ինչի արդյունքում գրավվեցին հայ իշխաններին պատկանող տիրույթները: Գող Վասիլի մահից հետո Քեսունի իշխանությունը ժառանգեց նրա որդեգիրը՝ Տղա Վասիլը: Արտաքին վտանգի պայմաններում Տղա Վասիլին հաջողվեց պաշտպանել իշխանության սահմանները, սակայն Ռուբինյան Թորոս Ա-ի կողմից խարդավանքների զոհ դառնալով՝ կորցրեց իշխանությունը, և այն միացվեց Եդեսիայի կոմսությանը:

- Ի մի բերելով առկա փաստերը՝ տեսնում ենք, որ խաչակիրների իրականացրած քաղաքականության արդյունքում կործանվեցին նաև Գող Վասիլի եղբայր Ռավանդանի իշխան Բագրատի և Գրիգոր Մագիստրոսի թոռներ՝ Ապլղարիպ և Լիկոս Պահլավունիների իշխանությունները: Ստեղծված իրավիճակում հայ իշխանների մեծ մասը ապաստան գտավ Կիլիկիայի հայ իշխան Թորոս Ա Ռուբինյանի ապարանքում:

- Բագրատունյաց թագավորության անկումից հետո հայրենիքից հեռացած և Կիլիկիայի հյուսիսային հատվածում գտնվող Անտիոքում (Փոքր Անտիոք) իշխանություն ձևավորած իշխաններից էր Պեխտը, ում ծավալած գործունեությունը պետք է տարբերել հայաշատ Մեծ Անտիոքի դուքս Էսաչատուրի գործունեությունից: Երկուսն էլ հանդիսանում էին իրենց իշխանությունների շուրջ համախմբված գաղթական հայության հովանավորները և պաշտպանները: Պատմական աղբյուրներում Մեծ Անտիոքի դուքս են հիշատակում նաև Գրիգոր Մագիստրոսի որդուն՝ Վասակին, որը կայսրությունից ինքնուրույն, անկախ գործունեություն ծավալեց և դրա հետևանքով սպանվեց:

- Մեր կողմից կատարված հետազոտության ընթացքում հանգեցինք այն եզրակացության, որ հայ բնակչության արտագաղթերը և Լեռնային Կիլիկիայի հարակից երկրամասերում հայկական իշխանությունների անկումը ունեցավ այն հետևանքը, որ Ռուբինյանների իշխանությունը դարձավ տարածաշրջանում հայության համախմբող միակ ուժը:

**Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. Փիլարտոս Վարաժնունու իշխանապետությունը (1072-1090 թթ.), Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, Եր., 2016, էջ 239-248:
2. Գող Վասիլի իշխանությունը, Բանբեր Երևանի համալսարանի Հայագիտություն, Եր., 2016, № 3 (21), էջ 47-55:
3. Տղա Վասիլի իշխանության խնդրի շուրջ. ՀԴ (2), Էջմիածին, 2017, էջ 108-115:
4. Կարսի թագավոր Գագիկի 1065 թ. գաղթը, Հայագիտական հանդես, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Եր., 2018, № 1 (39), էջ 186-200:
5. Օշին Գանձակեցու գաղթը Կիլիկիա 1073 թ., Ակունք, Իջևան, 2018, Թիվ 1(18), էջ 57-65:
6. Հայության գաղթերը 9-10-րդ դարերում, Ակունք, Իջևան, 2018, Թիվ 2 (18), էջ 41-58:
7. Հայագի Պեխտ և Խաչատուր դքսերը, Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես, Եր., 2018, էջ 228- 233:
8. Անիի Բագրատունյաց թագավորության անկումը. Գագիկ Բ-ի հաստատվելը Կապադովկիայում, Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 2018, № 3 (654), սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 116-128:

Степанян Арарат Варданович

Переселение армянского населения и образование армянских княжеств в соседних странах Нагорной Киликии в IX-XI вв.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”

Защита состоится 22-го октября 2019 г., в 14<sup>00</sup> на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4).

## РЕЗЮМЕ

Диссертация состоит из введения, трёх глав, заключения, списка использованной литературы и первоисточников и приложения.

Во введении обоснована актуальность темы, определены хронологические и географические пределы диссертации, представлена научная новизна и практическое значение, цели и задачи, определена степень разработанности данной проблемы.

В первой главе диссертации («Переселение и обоснование армян в Киликии, Северной Сирии и Месопотамии в IX-X веках») представлена политика насильственного переселения, применяемая Арабским халифатом в Армении, в результате которой армянские княжеские семьи и простой народ были силой переселены в Северную Сирию и Месопотамию. Политика принудительного переселения была также применена в отношении армян Византийской Империи. Представлен поток армян в Ликандос и проблемы образования армянских княжеств, политика населения Северной Сирии армянским народом, применяемая Византийской империей.

Во второй главе («Образование армянских княжеств в Покр-Айк и Каппадокии, Горной и Равнинной Киликии в XI веке») представлена

эмиграция армян из Васпураканского царства, полученные от империи Сенекеримом Арцруни владения в Каппадокии и Покр-Айк, и осуществлённая им деятельность. Описано также переселение царя Гагика II Анийского царства и Гагика Карсского из Родины в Каппадокию. Исследованы причины переселения Абелгариб Арцруни и Ошин Майреджерец и процесс обоснования в Горной и Равнинной Киликии.

В третьей главе диссертации («Армянские княжества в Северной Сирии») представлено формирование армянских княжеств в Северной Сирии в XI, предпосылки образования княжества Филарета Варажнуни, укрепление княжества и охват его границ. Представлена самостоятельная деятельность Васил Гоха, направленная на создание мощного княжества. Отмечается, что два армянских князя Пехт и Хачатур являлись разными личностями. Представлено также взаимодействие брата Васил Гоха, князя крепости Раванда - Баграта с крестоносцами и падение его княжества. Исследован обмен земель, осуществлённый Григором Магистросом, и получение новых земель в Месопотамии. Исследованы деятельность потомков Григора Магистроса: Васака Пахлавуня, Аблгариб и Ликос Пахлавуня, - осуществлённая в Северной Сирии, а также причины падения их княжеств.

В заключении подведены итоги проведённой работы и изложены основные выводы исследования.

Stepanyan Ararat Vardan

The Migration of the Armenian Population and the Creation of Armenian Princedoms in the neighboring Countries of the Mountainous Cilicia (IX-XI cc.)

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of  
“History of Armenia” 07.00.01

The defense of the dissertation will be held on October 22, 2019, at 14<sup>00</sup> at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave. 24/4).

#### SUMMARY

The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion, a list of primary sources and literature used and an appendix.

In the introduction the relevance of the topic is substantiated, the chronological and geographical frameworks of the dissertation are clarified, the scientific novelty and practical significance, goals and objectives of the research are presented, the level of research of the main issue is given.

In the first chapter of the dissertation (“Migrations of the Armenians and their Resettlement in Cilicia, Northern Syria and Mesopotamia in the IX-X Centuries”), the forced deportation policy implemented by the Arab caliphate in Armenia in the IX century is presented, as a result of which the Armenian prince families and ordinary people were forcibly deported and taken to Northern Syria and Mesopotamia. The Byzantine Empire also carried out the policy of expatriation towards Armenians. The flow of Armenians to Lycandos and the issues of the establishment of Armenian princedom in the Theme, the policy of the Byzantine Empire to resettle the Armenian population in Northern Syria are presented.

In the second chapter (“Creation of Armenian Princedoms in Armenia Minor-Cappadocia and Cilicia Trachaea and Cilicia Pedias in the XI Century”), the emigration of Armenians from the kingdom of Vaspurakan, the domains of Senekerim Artsruni in Cappadocia and Armenia Minor handled by the Empire and his activities are presented. The migration of king Gagik II of Ani and king Gagik of Kars from the homeland and their resettlement in Cappadocia is also discussed. The reasons for migration of Aplgharip Artsruni and Oshin Mairejretsi and the process of their resettlement in Cilicia Trachaea and Cilicia Pedias are also discussed.

In the third chapter of the dissertation (“Armenian Princedoms in Northern Syria”), the formation of the Armenian princedoms in Northern Syria in the XI century, the preconditions of formation of Philaretos Brachamios’s (Pilartos Varazhnuni) authority, the strengthening of his power and volume of its extension are presented. The independent activities of Gogh Vasil (Vassil the Robber), the creation of a powerful princedom are also presented. The fact that two Armenian princes of Antioch – Pecht and Khachatur were different individuals is elucidated, too. The cooperation of Bagrat – the brother of Gogh Vasil and the prince of Ravanda castle with the Crusaders and the destruction of his power, as well as the exchange of lands by Grigor Magistros and the acquisition of new territories in Mesopotamia are presented. The activities of Grigor Magistros’s heirs – Vasak, Aplgharip and Lykos Pahlavunis in Northern Syria and the reasons for the fall of their princedoms are discussed.

In the conclusion, the results of the implemented work are summarized and the main deductions of the study have been stated.